

Ոճրագործութեան մը ընթացքին վիրաւորու՞ծ էք:

Armenian (Rev 06/09)

Եթէ այո, Քալիֆորնիոյ Ոճիրի Զոհերու Օգնութեան Ծրագիրը (California Victim Compensation Program) կրնայ ձեզ օգնել:

Տեղական Օգնութիւն

Ոճրագործութեան զոհերու օգնութեան կարելիութիւնները հնարաւոր են Քալիֆորնիոյ 58 գաւառներուն մէջ: Ականատես Զոհերու Օգնութեան Կեդրոններու (Victim Witness Assistance Centers) մօտ գործող պաշտպանները պատրաստ են ձեզ օգնելու՝ երբ օգնութեան դիմէք: Անոնք կրնան զոհերուն օժանդակել անոնց յատուկ գրասենեակներ առաջնորդելով, ինչպէս նաեւ գրեական դատավարութեան տեւողութեան անոնց հետ ըլլալով:

Ականատես Զոհերու Օգնութեան Կեդրոններու ամբողջական ցանկը այս դրուցիկի էտեւի էջին վրայ է: Կարող էք նաեւ կապ հաստատել Ոճիրի Զոհերու Օգնութեան Ծրագիրին հետ հեռաձայնելով **800.777.9229** թիւին կամ ալ այցելելով **www.victimcompensation.ca.gov**. Կայքէջը:

Ոճիրի Զոհերու Օգնութեան Ծրագիրը կարող է նաեւ զոհերու դրամական հատուցում տալ որոշ ծախսերու պարագային: Ոճիրները որոնք մաս կը կազմեն այս հատուցման կ'ընդգրկեն.- ընտանեկան վայրագութիւն, մանուկներու չարաշահում, սեռային կամ ֆիզիքական յարձակում, սպաննութիւն, գողութիւն, գինով ինքնաշարժ վարել եւ ինքնաշարժով մարդ սպաննել: Ընտանիքի անդամներն ու երեխաները եւս կրնան օգտուիլ ծրագրէն:

Ծրագիրը կրնայ օգնել Քալիֆորնիոյ մէջ տեղի ունեցած ոճիրներու զոհերուն, ինչպէս նաեւ Քալիֆորնիոյ այն բնակիչներուն որոնք ոճիրի զոհ կը դառնան այլ նահանգ այցելելու ընթացքին:

Ծախսեր որոնք ծրագրի միջոցաւ կարող են հատուցուիլ.-

- Բժշկական կամ ատամնային հոգածութիւն
- Հոգեբանական հոգածութիւն
- Թաղման ծախսեր
- Եկամուտի կամ աջակցութեան եկամուտի կորուստ
- Վերաորակւորում (Rehabilitation)
- Բնակութեան վայրի փոփոխում (Relocation)

Ականատես Զոհերու Օգնութեան Կեդրոններու մանրամասներն ու անոնց հետ կապ հաստատելու միջոցները այս դրուցիկի էտեւի էջին վրայ են:

Ծրագիրը կրնայ նաեւ օգտակար ըլլալ ականատես ըլլալու պատճառաւ հոգեկան փսաս կրած երեխաներու հոգեբանական օգնութիւն տրամադրելու մէջ, նոյնիսկ եթէ երեխան զոհին հետ ազգականական կապ չունի:

Ծրագիրը ոճիրին կապ չունեցող ծախսերը չի կրնար հատուցել: Ան նաեւ չի կրնար հատուցել ծախսեր որոնք արդէն իսկ վճարուած են ապահովագրական կամ այլ յատուկ ընկերութիւններու կողմէ: Ծրագիրը նաեւ չի կրնար հատուցել ոճիրի հետեւանքով գողցուած կամ զանդուած ապրանքներու գինը, մարմնային կամ ատամնային մասերու (prosthetics, orthotic appliance) գինը, կամ ալ ցաւի ու տառապանքի պաղճառաւ գոյացած փասաները (pain and suffering):

Օգնութեան դիմելու կամ յաւելեալ տեղեկութեան համար կապ հաստատեցէ՛ք Ծրագրի ձեռնարկական կեդրոնին հետ, կամ ալ հեռաձայնեցէ՛ք **800.777.9229** թիւին, կամ ալ դիմումագիր մը վերցուցէ՛ք **www.victimcompensation.ca.gov**. կայքէջէն:

Դիմումագիր ներկայացնելու ժամանակ հաճեցէ՛ք յիշել անոր կցել ոճիրի յատուկ տեղեկագրերըն ու ծախսերու եւ անոնց վճարման կտրոնները՝ նկատի ունենալով որ Ծրագրի պաշտօնէաները կ'ուզեն ձեր գործը կարողութեան սահմաններէն մէջ արագ աւարտել:

www.victimcompensation.ca.gov

800.777.9229*

* Օգնութիւն կարելի է տրամադրել զանազան լեզուներով, երբ այդ պահանջուի:



Օգնութեան համար դիմեցէ՛ք ձեր գաւարի ՌՃԻրի Զոհերու Օգնութեան Ծրագրի Կեդրոնին:

Alameda	510.272.6180	Orange	949.975.0244
Alpine	530.694.2971	Placer	916.543.8000
Amador	209.223.6474	Plumas	530.283.6285
Butte	530.538.7340	Riverside	951.955.5450
Calaveras	209.754.6565	Sacramento	916.874.5701
Colusa	530.458.0449	San Benito	831.634.1397
Contra Costa	925.957.8650	San Bernardino	909.387.6540
Del Norte	707.464.7273	San Diego	619.531.4041
El Dorado	530.642.4760	San Francisco	415.553.9044
Fresno	559.488.3425	San Joaquin	209.468.2500
Glenn	530.934.6510	San Luis Obispo	866.781.5821
Humboldt	707.445.7417	San Mateo	650.599.7479
Imperial	760.336.3930	Santa Barbara	805.568.2400
Inyo	760.878.0282	Santa Clara	408.295.2656
Kern	661.868.4535	Santa Cruz	831.454.2010
Kings	559.582.3211 ext. 2640	Shasta	530.225.5220
Lake	707.262.4282	Sierra	530.993.4617
Lassen	530.251.8281	Siskiyou	530.842.8229
Los Angeles City	213.978.2097	Solano	707.784.6844
Los Angeles County	800.380.3811	Sonoma	707.565.8250
Madera	559.661.1000	Stanislaus	209.525.5541
Marin	415.499.6450	Sutter	530.822.7345
Mariposa	209.742.7441	Tehama	530.527.4296
Mendocino	707.463.4218	Trinity	530.623.1204
Merced	209.385.7385	Tulare	559.733.6754
Modoc	530.233.3311	Tuolumne	209.588.5440
Mono	760.924.1710	Ventura	805.654.3622
Monterey	831.755.5072	Yolo	530.666.8187
Napa	707.252.6222	Yuba	530.741.6275
Nevada	530.265.1246		